Արձանագրություն N 3

Երևան քաղաքում թեքահարթակների կառուցման և վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-18/34 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

19.01.2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ե. Կարապետյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին

(Տ. Իգիթյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/34» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ծանուցված բոլոր մասնակիցներից մասնակցել է միայն Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ն:

1.2 Բանակցությունների վարման համար հանձնաժողովի կողմից սահմանվել է 5 (հինգ) րոպե ժամանակահատված, որի ընթացքում մասնակցի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ (Հավելված 1-ը կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/34» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին

(Տ. Իգիթյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ գնային առաջարկների նվազեցման բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտի դրությամբ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվում Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 19.01.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված հարցման ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ե. Կարապետյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան

Հավելված N 1

Երևան քաղաքում թեքահարթակների կառուցման և վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-18/34 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության

ք. Երևան

19 հունվարի 2018թ.
Ժամը 11:00

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացված բանակցությունների ընթացքում՝ Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՆ /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳԻՆ /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Ստորագրություն
110000	79,000	

Մասնակցի անվանումը (անունը) (ազգանունը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)